

ՊՐՈՖԵՍՈՐ ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նվրոպայի ամենաականավոր և բազմա-
յա վաստակ ունեցող հայագետներից պրոֆ.
Ֆրեդերիկ Ֆեյդին շուրջ մեկ ամիս պաշտո-
նական այցելությամբ գտնվում էր Սովետական
Հայաստանում: Նրան ուրախառիթ պատենհու-
թյուն էր ընծայվել լինելու այն ժողովրդի բնաշ-
խարհիկ երկրում, որի գարավոր լեզուն, մա-
տենագրությունը, բանահյուսությունը և պատ-
մությունը տասնյակ տարիներ շարունակ ու-
սումնասիրել և գասավանդել է նա այնքան
սիրով ու նվիրվածությամբ:

Պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին ծնվել է 1908 թ.,
Փարիզում: Միջնակարգ կրթությունը ստացել
է Վերսալում: 1931—1933 թթ. նա հաճախում
է հաջողությամբ ավարտում է Փարիզի Արևել-
յան կենդանի լեզուների ազգային ինստիտուտը,
որը գեղեկ 1798 թ. առ այսօր հանդիսացել է
հայագիտության ամենախոշոր գարբնոցը Նվ-
րոպայում: Առաջին հայագետ ուսուցչապետն
էր աս հնագույն ինստիտուտում Հակոբ Շա-
հան Ջրպետը, որը հսկայական ջանքեր գործա-
դրեց հայագիտական ամբիոնի ստեղծման, կազ-
մակերպման և ամրապնդման ուղղությամբ,
հրատարակելով միաժամանակ ֆրանսերեն լեզ-
վով ծավալուն գասագիրք հայոց լեզվի քերա-
կանության վերաբերյալ: Այստեղ են դասա-
խոսություններ կարդացել և հայագիտական
ամբիոն ղեկավարել այնպիսի նշանավոր հայա-
գետներ, ինչպիսիք են՝ Ֆլորիվալը, Դուլորիեն,
Կարիերը, Մեյեն, Մակլերը, որոնք իրենց ե-
ռանգուն ու բեղմնավոր գործունեությամբ մեծ
վաստակ են թողել հայագիտության անդաստա-
նում: Ինչպես տեսնում ենք, հայագիտությունը
Ֆրանսիայում զարգացման երկար ուղի է ան-
ցել և ավելի քան 165-ամյա պատմություն ունի:

Հենց այս պատկառելի վաղեմություն ու-
նեցող Արևելյան կենդանի լեզուների ինստի-
տուտում էլ հայագիտական հիմնավոր և լայն
պատրաստություն է ձեռք բերում նաև երի-
տասարդ Ֆր. Ֆեյդին՝ ուսուցչապետ Ֆր. Մակ-
լերի ղեկավարությամբ, դառնալով նրա ամե-
նասիրելի աշակերտը. նկատելով վերջինիս փու-
թևանդությունն ու լայն հետաքրքրությունները
դիպի հայագիտության տարբեր ճյուղերը՝ Ֆր.
Մակլերը նրան համարում էր իր «հոգևոր զա-
վակը»: Հայագիտական իր ուսումնառության
մեջ խորանալու նպատակով Ֆր. Ֆեյդին 1932—
1933 թթ. աշակերտում է նաև հայագետ Լուի
Մարիեսին: Իր ուսումնառությանը զուգահեռ,
1931—1933 թթ. նա Սերի Սամուել Մուրադյան
հայկական վարժարանում դասավանդում է

ֆրանսերեն լեզու: 1933—36 թթ. հրավիրվում
է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան հայկական
վարժարանը՝ մանկավարժական աշխատանքի:
Այստեղ, 1935 թ., հանդիպում է իր ապագա



տիկնոջը՝ հայուհի օրիորդ Հերմինե Ֆեսիկեն-
յանին: Նույն թվականին, արդեն խորապես
հմտացած լինելով գրաբարին և աշխարհա-
բարին (մասնավորապես արևմտաօտերենին),
լույս է ընծայում իր անդրանիկ գիրքը ֆրան-
սերեն լեզվով՝ «Grammaire de la langue
armenienne moderne, dialecte occidental» (2e
et 3e annee) («Բերականություն արդի հա-
յերենի (արևմտահայերենի)» վերնագրով):

1936 թ. վերադառնալով Փարիզ, հայկա-
կան միջավայրում հանդես գալով հայերեն լեզ-
վով զեկուցումներով ու դասախոսություննե-
րով, կարճ ժամանակում Ֆրեդերիկ Ֆեյդին
լայն ճանաչում է գտնում իբրև հայագետ:
1937 թ. նա ընտրվում է Ս. Ղազարի Մխիթար-
յան ձեմարանի («Ակադեմիա») անդամ: 1940
թ. ավարտում է Սորբոնի հանրահոշակ համալ-
սարանը: 1949 թ. պրոֆեսորի կոչում է շնորհ-
վում նրան, և նույն թվականին էլ նա նշանակ-
վում է Արևելյան կենդանի լեզուների ազգա-
յին ինստիտուտի հայագիտական ամբիոնի փո-
խարինող-դասախոս, այնուհետև ամբիոնի վա-
րիչ առ այսօր:

Այս շրջանում լայն ծավալ են ստանում
պրոֆ. Ֆեյդիի ինչպես մանկավարժական գոր-
ծունեությունը, այնպես էլ հայագիտական հե-
տազոտությունների լույս ընծայումը: Նրա մոտ
հայագիտական տեսական ու գործնական լուրջ

պատրաստություն է անցել այնպիսի անգլիացի հայագետ, ինչպիսին է ռանասիրական գիտությունների դոկտոր Չարլզ Դաունթը:

Ուշագրավ է, որ հայագետների, այդ թվում և պրոֆ. Ֆեյդիի, երկարատև գործունեության շնորհիվ այսօր Սորբոնի համալսարանում թույլատրվում է հայագիտական թեմաներով գոկտորալան դիսերտացիաներ պաշտպանել: Հարկ է նշել նաև, որ պրոֆ. Ֆր. Ֆեյդին լեզվաբանական և Արևելագիտական միջազգային հանդիպումներում ու համաժողովներում հանդես է դալիս լուրջ հետաքրքրություն ներկայացնող հայագիտական զեկուցումներով:

Պրոֆ. Ֆր. Ֆեյդիի գիտական հետազոտությունները կարելի է խմբավորել և բնակ շորս բաժիններում՝ համաձայն նրանց բնույթին ու նպատակադրմանը: Հեղինակի նախասիրությունները հիմնականում ամփոփվում և կենտրոնացվում են հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության և ժողովրդական բանահյուսության բնագավառներում:

1. Պատմագիտական հետազոտումներ. — Պրոֆ. Ֆեյդին իր բոլոր աշխատություններում հետախուզումներն ու վերլուծությունները կատարում է հայ ժողովրդի պատմական անցյալի լուսաբանմամբ: Դա նրա գիտական վաստակի անուրանալի արժանիքներից մեկն է:

Նրա առաջին աշխատությունը, որ լույս է բնծայվել Փարիզում հրատարակվող «Անահիտ» հայագիտական հանդեսում (1938, № 4—5-ում)՝ կրում է հետևյալ վերնագիրը. «Հեթում Պատմիչ, «Մաղիկ պատմության» աշխատքին» գիրքին հեղինակը», Ա. Չոպանյանի առաջարկով: Անցողակի նկատներ, որ սա պրոֆ. Ֆեյդիի հայերենով շարադրված առաջին տպագիր գիտական աշխատությունն է, որը նա միաժամանակ իրեն ղեկուցում կարդացել է Փարիզում՝ հայ մտավորականության ներկայությամբ: Պրոֆ. Ֆեյդին հանգամանորեն վերլուծում է Հեթում Պատմիչի սույն երկի ստեղծման շարժառիթները, ադ ժամանակաշրջանի (XIII—XIV դարեր) պատմական իրադարձությունները, անդրադառնում գրքի առանձին բաժինների ներքին կառուցվածքին և արժեքավորում այդ երկի պատմագիտական և ազդեցության նշանակությունը: Նա ընդգծում է, որ Հեթում Պատմիչի այս՝ Արևելքի, հատկապես թաթարների մասին իր ուղղակի և անմիջական հարուստ տվյալներ պարունակող երկը մեծ հետաքրքրությամբ ընթերցվել է Գրանսիա ում և դասվել նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոյի հայտնի աշխատության կողքին: «Այս պոքր, — գրում է պրոֆ. Ֆեյդին, — Փարիզի Մատենադարանի ցուցակին մեղկարդացվի՝ ռեկումիս լավական կառուցում

դիրք մո կապահովվեն ժԳ դառու Ֆրանսայի պատմիչներուն շարքին մեղ» (Անահիտ, 1938, № 4—5, էջ 94, ընդգծումը մերն է—Լ. Խ.): Այս փաստը նույնպես վկայություն է այն բանի, որ հայ պատմիչի գործը դուրս է եկել ազգային մատենագրության սահմաններից: Ի դեպ՝ այստեղ հարկ ենք համարում նշել, որ Հեթում Պատմիչի այս երկի գիտական քննական բնագիրը՝ ֆրանսերեն ձևագիր տարբերակների համեմատությամբ, ղեկուս սպասում է իր հմուտ կազմողին. ադ առթիվ իր պատրաստակամությունն էր հայտնել պրոֆ. Ֆեյդին տարիներ առաջ:

Այնուհետև պրոֆ. Ֆեյդին ուշագրավ երկու հոդված է նվիրել Փափսոս Բուզանդի Պատմությանը: Առաջինը վերնագրված է՝ «Un passage énigmatique de Fauste de Byzance» («Փափսոս Բուզանդի մթին մի հատվածը», «Բաղմավեպ», 1957, № 11—12, էջ 282—284), որը միաժամանակ իրեն հաղորդում ղեկուցել է 1957 թ. Մյունխենում կայացած Արևելագիտական միջազգային համաժողովին: Հեղինակը փորձում է բանասիրական, բնագիտական և լեզվաբանական մանրակրկիտ վերլուծումների հիման վրա սրբագրել Փափսոս Բուզանդի Պատմության 6-րդ դպրության բովանդակության ցանկի հետևյալ հատվածը, որը իրոր մթին և աղավաղված է. «Ստորոտ ամենայն պատմութեանց Յաղագս իմ տեղեկութեան որք միանգամ զմատնանս ընթեռնոյր տունը տասն՝ համարական թուոր» նախապես նա բերում է էմինի, Մատթայանի, Տաշանի, Մառի, Մալխասյանի մեկնարանությունները, ճշտում և վերաթերթվորում, վերջում առաջարկելով իր ուղղումն ու մեկնարանությունները:

Մյուս կարևոր հոդվածը վերաբերում է Փափսոս Բուզանդի Պատմության կառուցվածքին՝ ամբողջությամբ վերցրած, և վերնագրված է՝ «L'Histoire de Fauste de Byzance comprenait-elle deux livres aujourd'hui perdus?» («Փափսոս Բուզանդի Պատմությունը ընդգրկում է արդյոք կորած երկու գիրք ես», «Բաղմավեպ», 1958, № 6—7, էջ 140—143): Իրոր հարցադրումը կարևոր է և լուսաբանման կարևոր շայագիտության մեղ այդ հարցը տարակուսանքների և վեճերի առիթ է տվել: Պրոֆ. Ֆեյդին անհրաժեշտ առանձին ուղղումներ է մտցնում որոշ բառերի և նախադասությունների մեկնարանման մեղ, որոնք նպաստում են այլ կերպ ըմբռնելու Փափսոսի Պատմության ներքին կառուցվածքը, որից և եզրակացնում է, որ երկը մեղ է հասել ամբողջական վիճակում, ուստի և չի ունեցել նախնիաց (I և II) կորած համարվող երկու դպրություններ: Այդ եզրակացության համար մի կողմից նա հենվում է

Մալխասյանցի մատենանշած վկայությունների վրա, ըստ որի ա) հնագույն խմբադրողը նշում է Փավստոսի երկի 3-րդ գլխի վերջին խոսքը, ինչպես և բ) համաձայն Փավստոսի սուղարարի, իր Պատմությունը սկսվում է խոսքով Կոտակի թագավորությանից և ավարտվում իերզակունյաց թագավորության անկումով, միայն, որ լիովին համապատասխանում է նաև Փավստոսի Պատմության մեր ձեռքը հասած յնագրի բովանդակությանը: Մյուս կողմից՝ պրոֆ. Ֆեյդին իր պատճառարանություններում նշում է դարձյալ Մալխասյանցի կողմից մատենանշած՝ հազար Փարպեցու վկայության վրա, ըստ որի վերջինիս թվարկած՝ Փավստոսի Պատմության որպես երկրորդ գլխի վերջին գլուխների ցանկը լիովին համապատասխանում է մեկ հասած Փավստոսի Պատմության համարակալված հենց 4-րդ գլխին:

2. Լեզվարանական աշխատություններ. — Պրոֆ. Ֆեյդիի հայագիտական վաստակում առանձնապես մեծ է հայոց լեզվի տեսության, ինչպես և նրա նորմատիվ բերականության և պատմական բերականագիտության հարցերի լուսարանմանը նվիրված աշխատությունների տեսակարար կշիռը: Օտարազգիների համար շարադրված հայերենի նորմատիվ բերականությունների շարքում հատկապես կարևոր տեղ են զբաղեցնում պրոֆ. Ֆեյդիի ֆրանսերեն երկու դասագրքերը: Առաջին դասագիրքը, ինչպես ասվեց, նա հրատարակում է 1935 թ., Ս. Ղազարում՝ „Grammaire de la langue arménienne moderne, dialecte occidental“ (Բերականություն արդի հայերենի (արևմտահայերենի)», 203 էջից բաղկացած, իսկ երկրորդը՝ 1948 թ. Փարիզում՝ „Manuel de la langue Arménienne, Arménienne occidentale moderne“ (Երկրորդ հայոց լեզվի (արևմտահայերենի)», 342 էջից բաղկացած: Վերջինս նախորդի համեմատությամբ առավել ամբողջական է և բերականական նյութի մատուցման եղանակով լիովին բարեփոխված ու կատարելագործված՝ հեղինակի հետազոտական փորձի և հմտության խորացման շնորհիվ: Ըստ որում Առաջարկում բացատրություն է տրվում ուսուցման մեջ կիրառված մեթոդի և աշխատության նպատակադրման մասին, ներածության մեջ ամփոփված խոսքով խոսվում է հայոց լեզվի հնդեվրոպական բնույթի, նրա զարգացման տարբեր փուլերի, ինչպես և ժամանակակից հայերենի երկու դրական լեզուների մասին, այնուհետև տրվում են արևմտահայ գրական լեզվի ձևաբանական և շարահյուսական օրինաչափությունները այնպիսի մատուցմամբ, որ սովորող օտարազգի ուսանողը կարողանա կարճ ժամանակում նաև

գործնականորեն նախադասություններ կազմել: Այդ պատճառով էլ լեզվի հիմնական տարրերը բացատրվում են միասնաբար: Բացի այդ, պրոֆ. Ֆեյդիի վերջին դասագիրքը կազմված է ոչ միայն արևմտահայ գրական լեզվի առհասարակ օրինաչափությունները ուսուցանելու միտումով, այլև միաժամանակ ընթերցանության համար մատուցված նյութերով խորամուխ դարձնելու օտարազգի ուսանողներին հայագիտության մեջ՝ ծանոթացնելով նրանց Հայաստանի աշխարհագրության, պատմության, լեզվի ծագմանաբանական և կառուցվածքային ընդհանուր բնութագրերին և առհասարակ մեր մշակույթի տարբեր բնագավառներին, որոնք անհրաժեշտ են հայագիտությամբ զբաղվողին:

Բացի վերոհիշյալ աշխատություններից, ֆրանսիացի հայագետը պարբերաբար մամուլում հանդես է գալիս արևմտահայ գրական լեզվի այս կամ այն երևույթի ուսումնասիրմանը նվիրված հոդվածներով: Տարիների ընթացքում հայերենի ուսուցման և անձնական պրպտումների ժամանակ օտարի աչքով և օտարի ականջով նկատած նրանց դիտողությունները նա գիտական ընդհանրացման է ենթարկում. ըստ որում նա չի սահմանափակվում միայն արևմտահայ գրական լեզվի օրինաչափությունների բնութագրմամբ, այլև դրանք համեմատության մեջ է դնում ինչպես գրաբարի, այնպես էլ արևելահայ գրական լեզվի համանման լեզվական իրողությունների հետ՝ ընդգծելու համար այն բնորոշ ու յուրահատուկը, որը առանձնահատուկ է արևմտահայ գրական լեզվին: Այսպես, օրինակ, պրոֆ. Ֆեյդին հրատարակել է „Les Articles en Arménien moderne occidental“ (Հոդերը արդի արևմտահայերենում, «Բազմավեպ», 1952, N° 7—9) հոդվածը, որում քննում է որոշիչ, ստացական, անձնական և ցուցական հոդերի կիրառման յուրահատկությունները: 1954 թվականին Կեմբրիջում կայացած Արևելագետների համաժողովում պրոֆ. Ֆեյդին կարդացել է նաև մի գեղեցիկ „Les facultés d'expression de la langue arménienne“ (Հայերենի արտահայտչական կարողությունները) թեմայով:

Խալերեն լեզվով «Բազմավեպ»-ում պրոֆ. Ֆեյդին մի այլ աշխատություն է լույս ընծայել „Cambiamenti di struttura del verbo armeno-Tempi, Modi e aspetti in armeno“ (Երբեք կառուցվածքային էվոլյուցիան, ժամանակը, եղանակը և կերպը հայերենում, «Բազմավեպ», 1956, N° 3) վերնագրով, որում պատմական մոտեցմամբ բնութագրում է բայ խոսքի մասի էվոլյուցիան դարերի ընթացքում՝ սկսած գրաբարից մինչև ժամանակակից հայերենի երկու գրական լեզուները:

Պրոֆ. Ֆեյդիի լեզվաբանական հոգվածներէ-
րից առանձնապէս ուզում ենք կանգ առնել եր-
կուսի վրա, որոնք իրենց արժարժած հարցերով
ընդհանրութիւն են կազմում, ուստի և կրնանք
դրանք միասնաբար:

«Հանգես ամսօրյա»-ում (1962, № 5
6) պրոֆ. Ֆեյդին տպագրել է «Considerations
sur l'alphabet de saint Mesrop» («Դիտողու-
թյուններ սուրբ Մեսրոպի այբուրենի մա-
սին») հոգվածաշարը, իսկ «Բազմավեպ»-ում
(1962, № 9—12) «La haute signification
de l'invention de l'alphabet armenien par
saint Mesrop» («Սուրբ Մեսրոպի ստեղծած
հայերեն այբուրենի մեծ նշանակութիւնը»):
Վերջինս նա իբրև գեկուցում կարդացել է նաև
Սորբոնի համալսարանում:

Ընդգծելով պատմահայր հորենացու հայտ-
նի թեւակոր խոսքը հայ ժողովրդի մասին՝
պրոֆ. Ֆեյդին հիացմունք է արտահայտում
Մեսրոպի հանճարով ստեղծված այբուրենի ա-
ռաջացրած մշակութային մեծ հեղաշրջման նը-
կատմամբ. «Մի ժողովրդի արժեքը չի չափվում
նրա քանակային կարևորութեամբ,—գրում է
նա.—այս սովորով չէ, որ անհրաժեշտ է վերհի-
շել որակի և քանակի միջև եղած հակադրութիւնը»
(«Բազմավեպ», 1962, № 9—12, էջ 283):
Նա հարց է դնում՝ ո՞րն է հայ ժողովրդի փոյա-
տեման և հարատեման գաղտնիքը. չէ՞ որ, դը-
րում է նա, հայ ժողովուրդը իր ֆիզիկական
գոյութիւնը պահպանել է այնպիսի պայման-
ներում, երբ իր երկիրը աշխարհագրական դիր-
քով գտնվել է ներխուժումների քառուղիներում՝
իշխան արևելքից, հյուսիսից, այնպես էլ արև-
մուտքից, և անընդհատ կոտորակվել է նա, ծը-
վատվել ու բռնկվել օտար բռնակալների կող-
մից: Սակայն իր կենսունակութեամբ նա հա-
րատեցել է և չի անհետացել պատմութեան աս-
պարեզից. այստեղ է, ահա, քանակին հաղթելու
ուժի հրաշքը,—եզրակացնում է պրոֆ. Ֆեյդին:
Պատմական ընդհանրացում կատարելով, նա
աներկմիտ հավաստիացմամբ գրում է. «...ես
իրավունք ունեի ասելու, որ հայերը գիտեցան
իրենց գոյութիւնը պահպանել կյանքում և ոչ
թե պարզապէս վերապրել: Որովհետև չի են-
թադրվում, թե հայերը անմատչելի լեռների
միջև մասնատված գտնվելու շնորհիվ միևնույն
լեզվով խոսող ցեղային խայտարղիտութիւնից
ստեղծված էթնիկական պարզ հավաքականու-
թիւն են: Ոչ, Անկախ նրանից, թե ազգա ին
պիտականութեան ժամանակ, թե առանց պետա-
կանութեան, տարբեր տիրողների լծի տակ՝
միավորված են եղել, թե անջատված՝ հայերը
երբեք չեն դադարել ազգ լինելուց: ...Նվ նա,
ավ հայ ժողովրդի հարատեման կենսական ե-

րաշխիքը տվեց, սուրբ Մեսրոպ Մաշտոցն էր»
(Նույն տեղում, էջ 284):

Պրոֆ. Ֆեյդին հանգամանորեն քննում է
գրերի գյուտի ստեղծման պատմական անհրա-
ժեշտութիւնը, քաղաքական շարժառիթներն ու
հեռամետ նպատակները, վերաբարձում է հայ
բանասիրութեան մեջ երկարատև վեճերի, թեր
ու դեմ կարծիքների բախման առիթ հանդիսա-
ցած այնպիսի հարց, որպիսին նախամեսրոպ-
յան գրի և գրականութեան գոյութեան ենթա-
դրութիւնն է: Հայագիտական գրականութեան
մեջ այս առնչութեամբ իրենց ծանրակշիռ խոսքն
են ասել այնպիսի խոշոր հայագետներ, ինչ-
պիսիք են Հրաչյա Աճառյանն ու Մանուկ Արեղ-
յանը, որոնք գիտական լուրջ փաստարկումնե-
րով հերքեցին նախամեսրոպյան հայ գրի և
գրականութեան մասին վարկածը: Այս կա-
պակցութեամբ հետաքրքրական մտքեր է զար-
դացնում նաև պրոֆ. Ֆեյդին:

Հակադրվելով նախամեսրոպյան գրի և
գրականութեան առկայութեան մասին վարկածի-
կողմնակիցներին, պրոֆ. Ֆեյդին նույնպէս
գտնում է, որ գրերի գյուտից անմիջապէս հետո
հայ մատենագրութեան բացառիկ արտադրան-
քը հիացում առթող իր կատարելութեամբ՝ ան-
պայման չպետք է ենթադրի նախամեսրոպյան
գրի և գրականութեան առկայութիւնը: Հայ դա-
սական պատմագրութիւնը ամենեւին չի հա-
վաստել ոչ մի ծանրակշիռ փաստ այդ վարկա-
ծի օգտին: Պատմաքննական մանրակրկիտ
փաստարկումներով պրոֆ. Ֆեյդին ներկայաց-
նում է իրերի վիճակը գրերի գյուտից առաջ:
Նա ընդգծում է այն միտքը, որ հավաստի ոչ
մի ապացույց չունենալով հանդերձ նախա-
մեսրոպյան շրջանից՝ հայ մատենագրութեան
արտակարգ բողբոջումն ու ճառագայթումը գե-
ղարվեստական ոճավորմամբ՝ կարելի է բա-
ցատրել լեզվաբանորեն: Հայոց լեզուն մշակ-
վել է դարերի ընթացքում, հղկվել և ոճավոր-
վել է ժողովրդական բանահյուսութեան բովում,
հոստորական և քարոզչական բանավոր արվես-
տում. եթե գրերի գյուտից անմիջապէս հետո
հնարավոր եղավ մեծ ճշգրտութեամբ թարգմա-
նութիւններ կատարել, ասում է պրոֆ. Ֆեյդին,
պատճառն այն է, որ բազմաթիւ անգամներ
նման հատվածներ նախապէս տասնյակ տարի-
ների ընթացքում բանավոր կերպով արդեն
թարգմանվել էին: Այդպէս է պարագան այն
թարգմանութիւնների, որ դասախոսները բազ-
մաթիւ անգամներ բացատրում են սովորող ա-
շակերտների սերունդներին: Մյուս կողմից՝
մերժելով հանդերձ նախամեսրոպյան գրի և
գրականութեան առկայութիւնը, պրոֆ. Ֆեյդին
հավասարութեան գիծ չի անցկացնում դասական
մատենագրութեան և ժողովրդական գրակա-

նություն, այսինքն՝ ժողովրդական բանահյուսության միջև. «...Ժողովրդական գրականությունը բավարար նախապատրաստություն չէ հաջորդ օրն իսկ արտադրելու V դարի հայ գրականության նման գործեր: Սակայն եկեղեցու հայրերի դարում քարոզչությունը ամենևին ժողովրդական ոճով արված պրոպագանդա չի եղել, և քրիստոնեական մտածողության արտահայտչականությունը պահանջում էր աստվածաբանական խոր ուսումնասիրություններ և խիստ ճշգրիտ ու նրբին մի լեզու» («Հանդես ամսօրյա», 1962, № 5—8, էջ 185):

Անդրադառնալով գրերի գյուտի խորհրդին և այն վիթխարի ներգործությանն ու դերին, որ ունեցավ այն հայ ժողովրդի պատմական բախտի ու ճակատագրի մեջ, պրոֆ. Ֆեյդին նշում է. գրերի գյուտից հետո «հայկական քաղաքակրթությունը, որն արդեն այնքան նշանակալի էր իր ճարտարապետության շնորհիվ, իր դրսևորումը պիտի գտներ այրուքների մեջ, մինչև անգամ գիտությունների մեջ, և ապահովեր իր հարատևությունը գրականությամբ, մի այնպիսի գանձով, որը նվազ կործանելի է, քան նրա ներգրավված լեզուն» («Բաղմավեպ», 1962, № 9—12, էջ 287, ընդգծումը մերն—Լ. խ.): Շարունակելով զարգացնել իր այս ընդհանրացումը, վերաիմաստավորում է մեսրոպյան գրի և գրականության նշանակությունը նաև ներկայի համար. «Եվ այս հին քաղաքակրթությունն է,—գրում է նա,—որ թույլ է տալիս տեսնելու, թե ինչպես հայերը փայլում են մարդկային գործունեության բոլոր ընդգրկվածներում՝ ինչպես արտասահմանում, այնպես էլ հայկական հանրապետությունում, որի Երևանյան համալսարանը չի երկնշում արևմտյան երկրների համալսարանների հետ բաղդատության մեջ դրվելու» (նույն տեղում, էջ 289):

Պրոֆ. Ֆեյդին Ֆրանսիայում լույս տեսած «Clarite» («Պայծառություն») հանրագիտարանում 1957 թ. հրատարակել է «Litterature armenienne» («Հայ մատենագրություն») համառոտ «Europe» («Եվրոպա») գրական հանդեսում «Coup d'œil retrospectif sur la littérature arménienne» («Հետադարձ հայացք հայ մատենագրության վրա») աշխատությունները, ունի նաև գրաքննադատական հոդվածներ պարբերական մամուլում:

3. Իրականագիտական ԼԵԼԻԸ.—Պրոֆ. Ֆեյդին զրադվել է նաև հայ գրականագիտության զարգացմանը նրան առանձնապես հետաքրքրել են հայկական երգիծանքն ու կատակերգությունը, թատերական ստեղծագործությունները, այդ պատճառով էլ հատուկ ուսումնասիրություններ է նվիրել Հակոբ Պարոնյանին և Երվանդ Օտյանին, ինչպես և թարգմանել ու հրատարակել

է վերջինիս «Առաքելություն դեպի Ծաղկավար» («Une mission a Dzabelvar») ստեղծագործությունը: Պրոֆ. Ֆեյդին իր գրականագիտական, ինչպես և ժողովրդական բանահյուսությունը վերաբերող հետադիտությունները նախապես լույս է ընծայել «Բաղմավեպ»-ում, ապա հրատարակել «Տետրեր հայ գրականության» («Cahiers de littérature arménienne») մատենաշարով:

«La Comedie et la Satire en Armenie Baronian et Odian» («Կատակերգություններ և երգիծանքը Հայաստանում. Պարոնյան և Օտյան») աշխատությունում պրոֆ. Ֆեյդին հիմնական հանգրվաններով անդրադառնում է հայ թատրոնի պատմության ընթացքին և հանգամանորեն կանգ առնում Պարոնյանի և Օտյանի ստեղծագործությունների վրա, վերլուծում և ընդգծում յուրաքանչյուր գեղագիտական հայացքները, արվեստի բարձրությունը, կերպարների կերտման վարպետությունը, գրական հնարանների ճարտարությունը, և այլն: և այլն: Խոսելով Պարոնյանի տաղանդի մասին, նրան համեմատում է ֆրանսիացի նշանավոր երգիծարան Մոլիերի հետ. «Բայց ահա հանդես է գալիս հայ իսկական Մոլիերը՝ հանձին Հակոբ Պարոնյանի»,—գրում է նա: «Նույն տեղում, էջ 5): Պարոնյանի կերտած կերպարները, անշուշտ, կրում են տեղի և ժամանակաշրջանի կնիքը, ասում է պրոֆ. Ֆեյդին: Բայց նրանք ունեն նաև համամարդկային մի կողմ. Պաղտասարը պատկանում է XIX դարի վերջի հայկական որոշակի մի միջավայրի: Բայց միաժամանակ նա իր ճաշակով և ընդհանրապես հոգով հավիտենական պարզունակ մարդն է, որը միշտ ուշացել է իր ժամանակից: Անուշը հավերժական կոկեսն է... և այլն:

Պրոֆ. Ֆեյդին ընդթագրում է Երվանդ Օտյանին իրրև ամենամարուր ունալիստական դպրոցի խոշոր վիպասանի, նորավեպ գրողի և երգիծողի իրրև եզրակացություն իր ուսումնասիրության, պրոֆ. Ֆեյդին աներկմիտ հրատակությամբ ու համոզմունքով գրում է. «...շրնորհիվ Պարոնյանի և Օտյանի, հայերի մոտ կատակերգությունն ու երգիծանքը կատարելագործման են հասել, և այս երկու խոշոր հեղինակների ստեղծագործությունները արժանի են գետնի վրա արևմտյան գրականության գլուխգործոցների կողքին՝ մարդկության գրական մեծ ժառանգության մեջ» (էջ 24):

1961 թ. պրոֆ. Ֆեյդին հրատարակում է Երվանդ Օտյանի «Առաքելություն դեպի Ծաղկավար» երգիծական երկի ֆրանսերեն իր թարգմանությունը՝ ամփոփ մի առաջարանով: Առաջարանում նա գրում է. «Մենք ընտրեցինք «Ա-

ոսթիություն դեպի Ծաղկավար» երկի թարգմանությունը, որովհետև նրա հավասարը չգիտենք եվրոպական գրականության մեջ» (էջ 7)։

Պրոֆ. Ֆեյդին «Լատուսի» հանձնարարությունում գրել է մի աշխատություն ևս «La litterature armenienne du XIIe au XVIIIes» (Հայ գրականությունը XII դարից մինչև XVIII դար) խորագրով, որը անսխալ է։

4. Հայ բանահյուսության վերաբերյալ ուսումնասիրություններ և քաղվածություններ.— Պրոֆ. Ֆեյդին առանձին ջերմությամբ և ոգևորությամբ է զբաղվում Հայ բանասիրության հարցերով։ Նա «L'Epopée populaire armenienne» (Հայ ժողովրդական դուցազնավեպը) վերնագրով մի ուշագրավ ուսումնասիրություն է գրել, որն առաջին անգամ տպագրվել է «Բազմավեպ»-ում (1957, № 7—8 և 9—10)։ Նա քննում է Հայ ժողովրդական բանահյուսության արձագանքները հորենացու և Մագիստրոսի աշխատություններում, վերլուծում Հայկի և Բելի կոիվը, Արամի, Շամիրամի և Արա Գեղեցիկի, Շարա Որկրամուրի, Ամդուհայի, Վահագնի, Արտաշեսի և Սաթնիկի պատումները, արժեքավորում և իմաստավորում դրանք, ցույց տալիս որոշ աղբյուրներ ու աղբյուրություններ պարսկական բանահյուսության հետ։ Նկնելով այդ բոլորից, պրոֆ. Ֆեյդին հանգում է հետևյալ եզրակացության. «...անհիշելի ժամանակներից ի վեր, հինգերորդ դարից վաղ մի անցած ժամանակաշրջանում, և նույնիսկ հավանաբար IV դարում, Հայաստանի դեպի բրիտանական մասսայական շրջադարձի ժամանակաշրջանում, հայերը երկարապատում էր պոսներ ունեին, որոնք ոչնչով չէին զիջում մյուս ժողովուրդների էպոսներին» (նույն տեղում, էջ 16)։

Պրոֆ. Ֆեյդին իր հետազոտության մեջ իբրև մեկնակետ է ընդունել այն դրույթը, ըստ որի ժողովրդական էպոսը արտացոլում է սոցիալական կյանքը և որոշ ժամանակաշրջանի գաղափարախոսությունը, մանավանդ վեր հանում այն հյուսող ժողովրդի վեհ զգացմունքներն ու իդեալը։ Հետազոտողը զբաղվել է նաև «Սասունցի Դավիթ» դուցազնավեպի գաղափարական բովանդակության ու կերպարների վերլուծությամբ։ «Սասունցի Դավիթ» էպոսի մասին մատենագրական տեղեկություններ հաղորդելուց հետո, բանասիրական վերլուծման է ենթարկում նրա ժամանակաշրջանի, պատմական անձնավորությունների հետ հերոսների հեռավոր առնչությունների, կիլիկյան թագավորությունների և խաչակիրների աղոտ արձագանքների և այլ խնդիրները։ «Հենց նախագանձի էլ ընկնում ենք հիացմունքի մեջ՝ «Սասունցի Դավիթ» դուցազնավեպի նկատ-

մամբ,—գրում է նա—Մեր «Ռուսանդի երգը» առանց նախերգանքի է մտնում սյուժեի մեջ... Տասույի հիասքանչ պոեմը սկսվում է Վիրգիլիոսի նմանողությամբ...»։

Պրոֆ. Ֆեյդին ուշադրություն է հրավիրում այն հանդամանքի վրա, որ «Սասունցի Դավիթ» դուցազնավեպի կառուցվածքը, տեսարանների արագ փոխհաջորդումը, կերպարների մարդկային բնավորությունները կարծես չեն ընդհանրացվում պատմության տպավորություն չեն թողնում։ Նրա հերոսները ոչ թե երևակայական են, այլ այնպես են ընդհանրացված, որ ազգային հերոսների բնույթ են ստացել։ Վերլուծելով «Սասունցի Դավիթ» դուցազնավեպի գաղափարական բովանդակությունը, պրոֆ. Ֆեյդին նշում է. նախ և առաջ դուցազնավեպում կա մի անզուսպ ձգտում դեպի անկախություն, բոլորը պատրաստ են ամեն ինչ զոհարելու իրենց երկիրը պաշտպանելու և իրենց ժողովրդին ազատելու համար, ուստի և նրանք հսկանքների պատերազմներ են մղում, գործադրելով իրենց անհաղթահարելի ուժը, շնահանքելով ոչ մի վրտանդի առաջ։ Ընդհակառակը, երբ իրենց ազատությունը ապահովված է, մի կողմ են թողնում զենքերը և երբեք չեն ծառայեցնում դրանք հարևան ժողովուրդներին ճնշելու համար։ Նրանց առաքիլությունը երբեք չի կայանում տիրապետման և նվաճման հոգեբանության մեջ» (նույն տեղում, էջ 32)։

Բնական է, այն խորությամբ ու նրբերանգությամբ, ինչպես որ ընկալել և իմաստավորել է ֆրանսիացի հայագետը, նա՝ կարող էր, իբրև արժանավոր ու հմուտ մասնագետ, ներկայացնել «Սասունցի Դավիթ» դուցազնավեպի ամբողջական թարգմանությունը ֆրանսերեն լեզվով, որը և կատարել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի հանձնարարությամբ։ Ուրախությամբ իմանում ենք, որ նա այդ գործը ավարտել և տպագրության է հանձնել։

Հայ բանահյուսության ընդգնացումը պրոֆ. Ֆեյդին այժմ ձեռնամուխ է եղել նաև ժողովրդական հավատալիքների՝ հմայիլների ուսումնասիրման և հրատարակման գործին, որը հեղինակի նախատեսությամբ բաղկանալու է երկու հատորից՝ հետազոտական և բնագրային բաժիններից։

* * *

Պրոֆ. Ֆեյդին առաջին անգամ հնարավորություն ունեցավ գտնվելու Սովետական Հայաստանում, սեփական աչքերով տեսնելու հայ ժողովրդին իր ստեղծագործական առօրյայում, ականատեսի հայացքով դիտելու և կշռադատելու այն վիթխարի վերափոխությունները, որ անցյալի ավերված, խռտանգված ու

արյունաքամ եղած մեր երկիրը վերապրել է իր այս վերածննդի տարիներին. արդյունաբերության հսկաների լիաթոր գործունեությունը, շինարարության աննախընթաց ծավալումը, գիտական հիմնարկների և լուսավորության ապշեցուցիչ աճը, Հայկական գիտությունների ակադեմիան, Երևանի պետական համալսարանը և Մաշտոցի անվան վեհատեսիլ Մառնադարանը—այս բոլորը խորապես հուզել են ֆրանսիացի հայագետին:

—Ասկե հիսուն տարի առաջ,—ասաց նա Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում ունեցած իր ելույթում,—ո՛վ կարող էր երևակայել, թե այսպիսի կարճ ժամանակամիջոցի մը մեջ կվերածնվի Չեր երկիրը այնպես, որ Հայաստանի հողի վրա ստեղծված կըլլա Հայկական գիտություններու ակադեմիա մը՝ գիտնականներու իր պատկառելի բանակով: Այս երկու բառերու՝ «Հայկական» և «ակադեմիա» բառերու զուգակցումը բազմանշանակալի է ինձի համար, որպես Չեր անցյալի պատմությունը իմացողի:

Բազմազրադ անցավ պրոֆ. Ֆեյդիի առօրյան՝ շրջապայություններ դեպի Հայաստանի պատմական վայրերը, հուշարձանները, հանդիպումներ ու շփումներ՝ մեր Հանրապետության գիտնականների հետ. նա ձեռագրեր համեմատեց Մատենադարանում՝ Փավստոս Բուզանդի վերաբերյալ, դասախոսություններ կարդաց՝ «Հայագիտությունը Եվրոպայում» թեմայով, և այլն, և այլն: Սովետական Հայաստանում ծավալված

հայագիտական աշխատանքների մասին պրոֆ. Ֆեյդին այսպես ամփոփեց իր տպավորությունները իր մի գրույցի ժամանակ.

—Արևմուտքի մեջ հայերու կողմն հայագիտության մշակումը առնվազն նվազելու վրա է. առաջվա խանդով չեն գրադիր: Բայց ատիկա իրենց հանցանքը չէ, որովհետև կյանքի պայմանները թույլ չեն տար գրադվելու. մեծ մասամբ ուսուցչությամբ պր գրադին և հետագիտական աշխատանքներ չեն կրնար ընել: Բարև-բախտարար Հայաստանը ճիշտ ժամանակին բռնեց հայագիտության ջահը, այստեղ ալ հայագիտությունը ծաղկեցավ: Պետք է ըսեմ, որ հայագիտության այս բացառիկ արտադրությունը թե՛ քաղաքի և թե՛ որակի տեսակետով ինձի չզարմացուց. թեև չլի ստանար գիրքեր, բայց գիտելի որ հայագիտությունը այստեղ իր արժանի տեղը գտած է: Այնպես որ եթե զարմացած չմնացի, ապա զմայլած՝ անպայման: Իսկապես՝ հայագիտությունը այստեղ կմշակվի՝ ճիշտ այնպես, ինչպես ֆրանսագիտությունը Ֆրանսիայի մեջ, գերմանագիտությունը՝ Գերմանիայի մեջ—հավասար կերպով,—առանձին չեշտով ասաց նա:

Հանձին պրոֆ. Ֆեյդիի Եվրոպայում ապրում և ստեղծագործում է բեղմնավոր դրչի տեր, հայագիտության լայն ոլորտներ ընդգրկող հմուտ և համակողմանի կարողություններով օժտված ձեռնհաս մի հայագետ:

Լ. ԽԱՉԵՐՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՊՈՒՄԻ ԳՅՈՒՂԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: Հրատարակություն Հապուսի գյուղի հայրենասիրաց բնակչության, Բոստոն, տպարան «Պայքար», 1963, 263 էջ, եկարազարդ, մեկ քարտեզ:

Նաբեբեդին մասիկ, շուրջ 350—400 տուն ամբողջությամբ հայ բնակչության ունեցող գյուղի, հայ ժողովրդի մի փոքրիկ մասնիկի՝ հապուսեցիների հուշամատյանն է:

Ժողովածուում մանրամասն տեղեկություններ են տրված գյուղի կրթական հիմնարկությունների և գործիչների մասին, հողագործության, առևտրի և արհեստների մասին, եկարազրված են բնատեսիկան կյանքն ու տոները, տեղեկություններ են տրված նաև գյուղում սպասարկված հետաքրքիր դեղերի և դարմանների, գյուղի կենցաղի ու սովորությունների մասին, որոնք կարող են նպաստել հայ ազգագրության պատմությանը:

Հայերենի զավասարարանների ուսումնասիրության համար արժեքավոր են Գ. Առաքելյանի հավաքած «Հապուսի առանձնեք» (էջ 77—88) և Գ. Մինասյանի կազմած «Գավառականի բառարան» (էջ 89—99) ուսումնասիրությունները, որոնք տեղ են գտել ժողովածուում ազգագրական զանազան այլ նյութերի հետ:

Այս հուշամատյանը պատմական կարևոր նյութեր է պարունակում Հապուսի խաղաղ շինարարական շրջանի պատմության, 1893 թ. հերոսական պաշտպանության և 1895—1896 թթ. կոտորածից հետո անցած տարիների, ինչպես և կոտորածի ու տարագրության մասին՝ տեղանատեսիկների մանրամասն հիշողություններով:

Հատորը նախաջված է սփյուռքահայ գանձալի գաղութներում գոյություն ունեցող Հապուսի գյուղի հայրենակցական միությունների ստեղծ-